Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Եղեգնաձոր **26.11. 2014թ.**

Համաձայն <ՀՀ Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդկան խորհրդի մասին> 2014 թվականի մարտի 20-ի N 15 որոշման 2-րդ կետով հաստատված թիվ 2 հավելվածում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ Վայոց ձորի մարզպետի 13.11.2014թ. N83 և 02.12.2014 թվականի N89 որոշման պահանջների, տեղի ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անդրանիկ նիստը:

Նիստին ներկա էին՝
Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անդամներ՝

Հարություն Սարգսյան-նախագահ, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետ

Վարդան Ավագյան-Եղեգնաձորի փոխքաղաքապետ

Հասմիկ Մարգարյան-ՀԵՀ Վայոց ձորի մարզային կենտրոնի համակարգող

Վասիլ Ասլանյան-Վայքի փոխքաղաքապետ

Հովիկ Մնացականյան-Մալիշկայի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար

Անուշավան Մովսիսյան -Վայոց ձորի տարածաշրջանային պետ. քոլեջի դասախոս

Բացակայում էին՝
Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անդամներ՝

Գագիկ Մարգարյան-Եղեգնաձոր համայնքի ավագանու անդամ

Արգիշտի Միքայելյան- <Թայմ Տուր> ՍՊԸ տնօրեն

Գոհար Թադևոսյան-Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

Սյուզաննա Ավետիսյան-Ջերմուկի երիտասարդական կենտրոնի համակարգող

ՕՐԱԿԱՐԳ

1. Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի քննարկում
   / զեկուցող Թամարա Թորոսյան/

2. Մարզպետին կից երիտասարդական խորհրդի քարտուղարի ընտրություն
   / զեկուցող Հարություն Սարգսյան/

3. 2015թ.-ի Երիտասարդական խորհրդի ծրագրի նախապատրաստական աշխատանքների քննարկում
   / զեկուցող Հասմիկ Մարգարյան/

4. Այլ ընթացիկ հարցեր

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի տարեկան աշխատանքային ծրագրի կազմման, ինչպես նաև խորհրդի գործունեության ոլորտների և ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ,
2. Խորհրդի հասարակական ոլորտը ներկայացնող անդամներից խորհրդի քարտուղար ընտրելու վերաբերյալ առաջարկություններ
3. Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի վերաբերյալ առաջարկություններ:

Վայոց ձորի մարզպետ, մարզպետին կից երիտասարդական խորհրդի նախագահ Հարություն Սարգսյանի կողմից առաջարկվեց Հասմիկ Մարգարյանի թեկնածությունը: Ներկաները միաձայն կողմ քվեարկեցին առաջարկին:

ՈՐՈՇՎԵՑ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի քարտուղար ընտրել Հասմիկ Մարգարյանին:
2. Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի վերաբերյալ ներկայացնել առաջարկություն, որը ենթադրում է կամավորության ինստիտուտի ներառումը հայեցակարգում:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆ